ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

1 Առկա իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Տրանսպորտային միջոցների աճի և դրա հետևանքով առաջացած խցանումների արդյունքում ավելացել են նաև ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքերը, որի պատճառով վարորդների նկատմամբ կիրառվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված լրացուցիչ տույժ՝ տուգանային միավոր:

Խնդիրը հատկապես մեծ ազդեցություն է թողնում այն վարորդների վրա, ովքեր զբաղվում են ուղևորափոխադրմամբ և բեռների փոխադրմամբ, իրենց սոցիալական կարիքները հոգում են նման ծառայություն իրականացնելու արդյունքում վաստակած գումարով:

Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ունեցող անձին մեկ տարի ժամանակահատվածի համար տրվում է 9 միավոր:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար որպես վարչական պատասխանատվության միջոց կիրառվում է 0.25, 0.5, 1, 2, 3 կամ 4 տուգանային միավոր:

Շատ հաճախ, հատկապես, որպես ձեռնարկատիրական գործունեություն, ուղևորափոխադրմամբ և բեռնափոխադրմամբ զբաղվող վարորդներին տրված 9 միավորը չի բավականացնում, ինչը հանգեցնում է առավել ծանր սոցիալական խնդիրների առաջացմանը, սոցիալական բեռի ավելացմանը և քաղաքացիների արդարացի դժգոհությանը:

Ներքին գործերի նախարարությունից ստացված վիճակագրական տվյալների վերաբերյալ գրության համաձայն՝ 2020 թվականից մինչև 2024 թվականի մայիսի 31-ը 14.365 վարորդի տուգանային միավորները լրանալու հիմքով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցվել է, իսկ նույն տարում կրկնակի կասեցմամբ վարելու իրավունքից զրկվել է 628 անձ:

Չնայած այն հանգամանքին, որ վարչական իրավախախտումների համար ներկայումս գործող օրենսդրությամբ նախատեսված է պատասխանատվություն, «տուգանային միավոր»-ի ձևով, այնուամենայնիվ վերոնշյալ խումբ վարչական իրավախախտումները դեռևս խիստ մեծ թիվ են կազմում: Ավելին, բազմաթիվ են դեպքերը, երբ նշված իրավախախտումները կատարելուց և վարչական տույժի ենթարկվելուց հետո վարորդները շարունակում են վարչական իրավախախտում համարվող արարքների կատարումը, մի շարք դեպքերում վարչական իրավախախտում համարվող արարքները շարունակվում են նույնիսկ երկրորդ անգամ տույժի ենթարկվելուց հետո: Նշված իրավիճակը, ի թիվս այլնի, հետևանք է նաև այն

բանի, որ քննարկվող իրավախախտումների համար սահմանված վարչական տույժերն համարժեք չեն դրանց հանրային վնասակարությանը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նշված իրավախախտումների կապակցությամբ նախատեսված տուգանային միավորներն առաջարկվում է խստացնել հետևյալ չափանիշների հիման վրա՝

Որակական: Հաշվի է առնվել վարչական իրավախախտումների հանրային վնասակարությունը և տուգանային միավորներ նախատեսվել են հանրային վնասակարության առավել բարձր աստիճան ունեցող իրավախատումների համար:

Քանակական: Հաշվի է առնվել վարչական իրավախախտումների կատարման հաճախականությունը:

Տուգանային միավորի առաջարկվող խստացումները վերաբերում են այնպիսի վարչական իրավախախտումների (օրինակ՝ տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելը, հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալը, անվտանգության գոտիները չամրակապած վիճակում վարելը, ապակիների լուսաթափանցելիության չափի խախտման համար պատասխանատվության ենթարկվելուց հետո 1 տարվա ընթացքում նույն արարքը կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ կատարելը և այլն), որոնց պարագայում իրավավախախտման կատարումն ակնհայտորեն չունի սոցիալական համատեքստ, այլ՝ պայմանավորված է մարգինալ վարքագծի շարժառիթներով:

Համեմատաբար տարածված, սակայն ճանապարհային երթևեկության համար ոչ բարձր ռիսկեր պարունակող իրավախախտումների (օրինակ՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը՝ 0 25 միավոր) համար տուգանային միավորի խստացում չի առաջարկվում:

Միջազգային փորձի ուսումնասիրություն

Ֆրանսիա՝ վարորդներին տրամադրվում է ընդհանուր 12 միավոր[1]:

Իսպանիա՝ մինչև 3 տարի վարման փորձ ունեցող վարորդներին տրվում է 8 միավոր, 3 տարուց ավելի վարորդական ստաժ ունեցողներին՝ 12 միավոր:

Գերմանիա՝ 8 միավոր (2014 թվականին այս համարկը փոխարինել է նախկին 18 բալանոց համակարգը):[2]

Իտալիա՝ վարորդներն ունեն 20 միավոր[3] [4]:

Լեհաստան՝ մինչև 2 տարի վարորդական փորձ ունեցողներ՝ 21 միավոր, փորձառու վարորդներ՝ 24:

---

[1] https://www.service-public.fr/particuliers/vosdroits/F31551?lang=en
https://www.french-property.com/guides/france/driving-in-france/driving-offences-penalties

[2] https://www.kba.de/DE/Themen/ZentraleRegister/FAER/Punktekatalog/verantwortung_betrieb_fz.html;jsessionid=D296E01C7E8CA0B5C9ED4A0F5B2C76A2.live21301?nn=3583724

[3] https://www.angloinfo.com/how-to/italy/transport/driving/penalties-drink#:~:text=Licence%20points%20system&text=They%20adopt%20a%20points%2Dbased,take%20a%20new%20driving%20test.

[4] https://www.angloinfo.com/how-to/italy/transport/driving/penalties-drink#:~:text=Licence%20points%20system&text=They%20adopt%20a%20points%2Dbased,take%20a%20new%20driving%20test.

Վրաստան՝ 100 միավոր:

Պորգուգալիա՝ 12 միավոր: Առավելագույն՝ 4-ից 6 միավոր է գանձվում առավել ծանր խախտումների համար:[5]:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխությունների իրականացումը՝ վարորդին մեկ տարի ժամկետով տրվող միավորների ավելացումը, հնարավորություն կընձեռնի՝ թեթևացնել վարորդների սոցիալական բեռը:

Նշված վարչական իրավախախտումների համար տուգանային միավորների ոչ էական խստացումը կընդգծի պետության հասցեական մոտեցումը, կկանխի ռիսկերը, կնպաստի տուգանային միավորների նպատակային կիրառմանը, որը կհանգեցնի ճանապարհային պատահարների նվազման:

Օրենսդրական փոփոխությունների իրականացումը կնպաստի նաև **տուգանային միավորների համակարգի՝ որպես ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման իրավական գործիքի առավել արդյունավետ իրացման:**

3 Ակնկալվող արդյունքը

Նախատեսված փոփոխությունները նպատակ են հետապնդում՝ թեթևացնելու վարորդների սոցիալական բեռը: Նախատեսվում է նաև որոշ այնպիսի իրավախախտումների համար տուգանային միավորների խստացում, որոնք բնութագրվում են մարգինալ վարքագծի շարժառիթներով և որոնց կատարումը ակնհայտորեն չունի սոցիալական համատեքստ (օրինակ՝ տրանսպորտային միջոցները ոչ սթափ վիճակում վարելը, հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալը, անվտանգության գոտիները չամրակապած վիճակում վարելը, ապակիների լուսաթափանցելիության չափի խախտման համար պատասխանատվության ենթարկվելուց հետո 1 տարվա ընթացքում նույն արարքը կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ կատարելը և այլն):

Տրամադրվող տուգանային միավորների ավելացման պայմաններում համաչափորեն հակակշռվում և չեզոքացվում են խախտումների հնարավոր ավելացման քրեաբանական ռիսկերը:

Նախագծով ընդգծվում է սոցիալական և մարգինալ շարժառիթներով բնութագրվող երթևեկության կանոնների խախտումների նկատմամբ պետության տարբերակված և համաչափ մոտեցումը:

[5] http://www.ansr.pt/Noticias/Pages/Carta-por-Pontos.aspx